ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

*քաղաք Հրազդան* *14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թ.*

# *ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10*
# *ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ*

*Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 8 անդամներ:*

*Բացակա էին՝ Նվեր Առաքելյանը, Գարիկ Գրիգորյանը, Վիգեն Գրիգորյանը, Արսեն Հարությունյանը*

*Նիստը վարում էր համայնքի ղեկավարի տեղակալ՝ Վարուժան Սաֆարյանը*

*Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Ռոբերտ Դանիելյանը*

*Լսեցին*
*ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 10 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ՌՈԲԵՐՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ/*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածի.*

*Հաստատել Հրազդան համայնքի ավագանու 2021 թվականի սեպտեմբերի 14-ի N 10 արտահերթ նիստի օրակարգը.*
*1. «Հրազդան համայնքի Հարավային թաղամասի Շահումյան փողոցի հիմնանորոգում» և «Հրազդան համայնքի ճանապարհների 2572,0 մետր հատվածի (Ջրառատ թաղամասից դեպի «Հրազդան ՋԷԿ» 1264,0 մետր, 3-րդ փողոց 670,0 մետր, Պուրակային փողոց 638,0 մետր) հիմնանորոգում» աշխատանքների հայտերի ներկայացման ժամկետ սահմանելու մասին*
*2. Փոխադրամիջոցի գույքահարկի գումարները վերադարձնելու մասին*
*3. Տեղական վճարի արտոնություն կիրառելու մասին*

*4.Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի N 152 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին*

*Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0*

*Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 163/*

*Լսեցին*
*«ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԹԱՂԱՄԱՍԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ» ԵՎ «ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ 2572,0 ՄԵՏՐ ՀԱՏՎԱԾԻ (ՋՐԱՌԱՏ ԹԱՂԱՄԱՍԻՑ ԴԵՊԻ «ՀՐԱԶԴԱՆ ՋԷԿ» 1264,0 ՄԵՏՐ, 3-ՐԴ ՓՈՂՈՑ՝ 670,0 ՄԵՏՐ, ՊՈՒՐԱԿԱՅԻՆ ՓՈՂՈՑ՝ 638,0 ՄԵՏՐ) ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*\/Զեկ. ՌՈԲԵՐՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ/*

*Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով, հաշվի առնելով ձեռք բերվող աշխատանքների հրատապությունը.*

*1. Հրատապ բաց մրցույթով ձեռք բերվող «Հրազդան համայնքի Հարավային թաղամասի Շահումյան փողոցի հիմնանորոգում» և «Հրազդան համայնքի ճանապարհների 2572,0 մետր հատվածի (Ջրառատ թաղամասից դեպի «Հրազդան ՋԷԿ» 1264,0 մետր, 3-րդ փողոց՝ 670,0 մետր, Պուրակային փողոց՝ 638,0 մետր) հիմնանորոգում» աշխատանքների հայտերի ներկայացման ժամկետը սահմանել 15 օրացուցային օր:*
*2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0*

*Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 164/*

*Լսեցին*
*ՓՈԽԱՏՐԱՄՎՈՂ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ԱՐԵՎԻԿ ԵՓՐԵՄՅԱՆ/*

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 252-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոստոսի 3-ի N 920-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածով, հիմք ընդունելով Կոտայքի մարզի Ջրառատ համայնքի 1 փողոցի 20 տան բնակիչ Նարեկ Հայրապետյանի 2021 թվականի սեպտեմբերի 10-ի Կ-1072, Հրազդան քաղաքի Պետրոս Դուրյան փողոցի 18 շենքի 6 բնակարանի բնակիչ Գուրգեն Վարդանյանի 2021 թվականի սեպտեմբերի 9-ի Կ-1071 դիմումները.*

1.Հրազդանի համայնքապետարանի 900125001215 հաշվեհամարին որպես փոխադրամիջոցի համար գույքահարկ վճարված գումարից 20000 /քսան հազար/ դրամը հետ վերադարձնել Կոտայքի մարզի Ջրառատ համայնքի 1 փողոցի 20 տան բնակիչ Նարեկ Հայրապետյանին՝ տրանսպորտային միջոցի Հրազդան համայնքում հաշվառում չունենալու պատճառով,13564/տասներեք հազար հինգ հարյուր վաթսունչորս/ դրամը՝ Հրազդան քաղաքի Պետրոս Դուրյան փողոցի 18 շենքի 6 բնակարանի բնակիչ Գուրգեն Վարդանյանին՝ առաջացած գերավճարի չափով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 165/

Լսեցին
ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԶԱՐԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 16-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ենթակայության արտադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախող երեխաների տեղական վճարները ուսումնասիրելու և զեղչելու նպատակով ստեղծված հանձնաժողովի 2021 թվականի սեպտեմբեր 09 -ի թիվ 7 արձանագրությունը.

1. 2021 թվականի սեպտեմբեր ամսից մինչև դեկտեմբեր ամիսը ներառյալ «Հրազդան համայնքի Առնո Բաբաջանյանի անվան թիվ 2 երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն հաճախող Անի Աշոտի Չիտչյանի վարձավճարը նվազեցնել 50 տոկոսի չափով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 166/

Լսեցին
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 152 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԶԱՐԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

1. Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի «Հրազդան համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատությունների, մշակութային և սպորտային հիմնարկների հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N152 որոշման N14 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 167/

Ավագանու անդամներ՝

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ

ՁԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ

ՁԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ

ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

ՍՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ՌՈՄԻԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՎԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝

Վ. ՍԱՖԱՐՅԱՆ ______________

Նիստն արձանագրեց՝ Ռ. Դանիելյան ______________

Հավելված
Հրազդան համայնքի ավագանու
2021 թվականի սեպտեմբերի 14 -ի
N 167 որոշման
Հավելված 14
Հրազդան համայնքի ավագանու
2020 թվականի դեկտեմբերի 14 -ի
N 152 որոշման

# ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

## Հրազդան համայնքի Կոստան Զարյանի անվան մանկական արվեստի դպրոց ՀՈԱԿ

| Հ/հ | Կազմակերպության անվանումը | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Կոստան Զարյանի անվան արվեստի դպրոց | Տնօրեն | 1 | 120000 | 120000 |
| 2 | | Փոխտնօրեն | 1 | 93300 | 93300 |
| 3 | | Գլխավոր հաշվապահ | 1 | 93300 | 93300 |
| 4 | | Դասատու դաշնամուրի | 3,4(80դ/ժ) | 93300 | 311000 |
| 5 | | Դասատու ալֆլեյտի | 1,17(28դ/ժ) | 93300 | 108850 |
| 6 | | Դասատու կերպարվեստի | 1,33(32դ/ժ) | 93300 | 124400 |
| 7 | | Դասատու շեփորի | 1,08(26դ/ժ) | 93300 | 101075 |
| 8 | | Դասատու երաժշ.գրականության | 0,8(19դ/ժ) | 93300 | 73863 |
| 9 | | Դասատու երգչախմբի | 0,5(12դ/ժ) | 93300 | 46650 |
| 10 | | Դասատու ընտրովի առ. | 1,7(40դ/ժ) | 93300 | 155500 |
| 11 | | Դասատու երաժշտ.նախապատրաստության | 2(48դ/ժ) | 93300 | 186600 |
| 12 | | Դասատու վոկալի | 1(24դ/ժ) | 93300 | 93300 |
| 13 | | Դասատու ջութակի | 1(24դ/ժ) | 93300 | 93300 |
| 14 | | Դասատու քանոնի | 1(24դ/ժ) | 93300 | 93300 |
| 15 | | Նվագակցող | 0,42(10դ/ժ) | 93300 | 38875 |
| 16 | | Դասատու դուդուկի | 1(24դ/ժ) | 93300 | 93300 |
| 17 | | Դասատու պարի | 1(24դ/ժ) | 93300 | 93300 |
| 18 | | Գործավար | 1 | 93300 | 93300 |
| 19 | | Տնտեսվար | 1 | 93300 | 93300 |
| 20 | | Հավաքարար | 1 | 93300 | 93300 |
| 21 | | Պահակ | 1 | 93300 | 93300 |
| | Ընդամենը | | 24.4 | | 2293113 |